

Հոգեվիճակիս աղանակական խռովքը ԻՆՉՈ՞Ւ ԹԻՐԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱՅ

ՀՐԱՆԴ ՏԻՆԸ

Ակսիմ հետեւեալ նշումով վեց-ամսեայ բանտարկութեան դատապարտուեցայ «թրքութիւնը անարգելու» յանցանքով, զոր երբեք չեմ գործած: Որպէս վերջին ճար կը դիմեմ Մարդկային իրաւանց եւրոպական ատենան (ՄԻԵԱ): Մինչեւ 17 յունուար թուականը փաստաբաններս պիտի ներկայացնեն դիմումը, որուն կցելու համար ինձմէ ուզեցին գրութիւն մը, ուր կը պատմուի դէպքերուն զարգացումը: Յարմար գտայ հանրային կարծիքին հետ բաժնել այդ գրութիւնը, որովհետեւ ՄԻԵԱ որոշումին չափ, Նոյնիսկ ատկէ ալ անելի, կարելոր է թուրքիոյ հանրութեան խղճին որոշումը: Քանի մը շաբաթ շարունակելի այս յօդուածաշարքի կարգ մը տեղեկութիւններն ու հոգեվիճակս թերեւս յափտենապէս ծածուկ պահեի, եթէ ՄԻԵԱ դիմելու հարկադրանքին տակ չգտնուէի: Բայց եթէ գործը հասած է այս կետին՝ անցած-դարձածը յայտնելը կարծեմ լաւագոյնն է...

Ո՛չ միայն ես, ո՛չ միայն հայերը... Ողջ հանրային կարծիքը կը հետաքրքրուի եւ առանց վարանքի կը հարցնէ հետեւեալը. բոլոր անոնց համար, որոնք թրքութիւնը անարգելու ամբաստանութեամբ հարցաքննուեցան կամ դատուեցան, ըստ 301-րդ յօդուածի տրամադրութեան, ձեւական կամ իրաւական լուծում մը գտնուեցաւ եւ դատերը, առանց դատապարտումի յանգելու, առաջին իսկ նիստերուն աւարտեցան, իսկ ինչո՞ւ Հրանդ Տինք դատապարտուեցաւ վեց-ամսեայ ազատազրկումի:

Յաղթահարում դէպքեր

Սիւալ սահմանում մը կամ անպիտան հարցում մը չէ ասիկա: Եթէ կը յիշուի, Նախքան Օրհան Փամուքի դատավարութիւնը հազարու մէկ ճար մտածուեցաւ դատը ջնջելու համար: Ոմանց կարծիքով Արդարադատութեան Նախարարութիւնը դատավարութեան համար արտօնութիւն պէտք է տար, հետեւաբար հոն պէտք էր հարցնել: Այդպէս ալ եղաւ: Արդարադատութեան Նախարարը, երբ տեսաւ որ գնդակը նետուած է իրեն, թակարդուածի վիճակի մէջ մէկ կողմէ Փամուքին կրակ կը ժայթքեր, միւս կողմէ ալ կոչ կ'ուղղեր որ պէտքի ան ըսեր, թէ նման բան մը չէ ըսած: Վերջապէս, կայացաւ Փամուքի դատին առաջին նիստը, որու ժամանակ պատահած վանդալական յարձակումներու պատճառով թուրքիա աշխարհին խայտառակուեցաւ, եւ որպէսզի երկրորդ նիստին նման բաներ չպատահէին՝ դատը ջնջուեցաւ եւ Փամուքի 301-



ի արկածին ձեւական լուծումով մը վերջ տրուեցաւ: Նման գործընթաց մը, անելի թէթեւ, պատահեցաւ Էլիֆ Շաֆաքի դատին: Նախքան դատը մեծ աղմուկ բարձրացաւ, բայց առաջին իսկ նիստին, Նոյնիսկ առանց Շաֆաքի դատարան գալուն, վերջացաւ: Ձեւական այս լուծումները գոհ կը ձգէին ամէնքը: Նոյնիսկ վարչապետ Թայյիպ Էրտողան հեռաձայնեց Շաֆաքին եւ յղեց իր մաղթանքները: Նման «յաղթահարում»ներ պատահեցաւ նաեւ այն լրագրող ու համալսարանական բարեկամներուն, որոնց դէմ «թրքութիւնը անարգելու» մեղադրանքով դատեր բացուած էին Հայկական խորհրդածրոյզէն ետք իրենց գրածներուն պատճառով:

Անպատասխանելին...

Չկարծուի, որ Նախանձած եմ դատերուն այս կերպով Նուազ վնասով մը յաղթահարուելուն: Ընդհակառակը, դատերուն բացուիլը կամ

դատապարտուիլը: Լեզուները պապանձեցան, երբ նիւթը այդ դատին վերաբերեցաւ: Ամէն անոնց, որոնց դէմ «թրքութիւնը անարգելու» ամբաստանութեամբ հարցաքննութիւն կամ դատ յարուցուած էր 301-րդ յօդուածով, կերպով մը ձեւական կամ իրաւական լուծում մը տրուեցաւ եւ դատերը ջնջուեցան առաջին իսկ նիստին, Նախքան դատապարտումի որոշումը, մինչդէռ Հրանդ Տինքը, Նոյնիսկ առանց յանցակազմի գրութեան մը պատճառով, ինչո՞ւ վեց ամսուան ազատազրկումի դատապարտուեցաւ:

Հայ ըլլալու դերը

Այո, բոլորս պէտք ունինք այս հարցումի պատասխանին: Յատկապէս՝ ես: Վերջապէս այս երկրի մէկ քաղաքացին եմ եւ յամառօրէն կ'ուզեմ հաւասար ըլլալ բոլորին: Անկասկած, հայ ըլլալու պատճառով, Նախապէս, բազմաթիւ անգամներ բացասական խտրականութեան ենթարկուած եմ: Չոր օրինակ, 1986-ին, երբ Տեկզիլի մէջ բանակային ծառայութիւնս կը կատարէի 12-րդ հետեւակային գունդին մէջ, որպէս կարճաժամկետ (ուժ ամիս) զինուոր, բոլոր ընկերներուն, երդման արարողութենէն ետք, աստիճան տրուեցաւ եւ միայն ես մնացի որպէս հասարակ զինուոր: Երկու զակի տէր մեծահասակ մարդ մըն էի, թերեւս պէտք չէ հոգս ըլլար: Մանաւանդ որ որոշ հանգստութիւն մըն ալ ապահոված էր: Հերթապահութիւն կամ անելի դժուարին պարտականութիւններ պիտի չտրուէին: Եկուր ու տես սակայն, որ այս խտրականութիւնը հարուածած էր զիս: Հանդիսութենէն ետք, երբ ամէն մարդ ուրախութիւնը կը բաժնէր իր ընտանիքին հետ, թիթեղեայ հիւղակի ետին, երկու ժամ շարունակ միայնակ լայս երբեք չեմ մոռնար: Յիշողութեանս վրայ տակաւին վերջ մըն է գնդապետին զիս իր սենեակ կանչելն ու «Մի տխրիր, եթէ հարց մը ըլլայ, քովս կու գաս» ըսելը: Անշուշտ, աստիճանի մը տուուչութիւն չէ 301-ի պատճառով դատուիլը, անպարտ արձակուիլը կամ դատապարտուիլը: Հետեւաբար, «եթէ անոնք չեն դատապարտուած, ես ալ պէտք չէ դատապարտուիմ», կամ մանաւանդ «եթէ զիս դատապարտեցին՝ զիրենք ալ պէտք է դատապարտեն» չեմ ըսեր երբեք: Բայց որպէս մէկը, որ հասունցած է խտրականութեան ենթարկուելու



րհ թե «յանուն թուրք ազգի» էր, այլ «յանուն թրքական պետութեան»: Ուրեմն, փաստաբաններս պիտի դիմէին Վճռաբեկ ատեան, սակայն ինչպէ՞ս կրնայինք ապահով ըլլալ, թէ չափուսահմանս ինծի սորվեցնել որոշած ընդատակեայ ուժերը այստեղ եւս պիտի չբանեցնէին իրենց ազդեցութիւնը:

Եւ յետոյ, Վճռաբեկ ատեանի որոշումները մի՞շտ ճիշդ էին:

Վճռաբեկ ատեանի կողմէ ստորագրուած չէի՞ն այն անիրաւ որոշումները, որոնք փոքրամասնական հաստատութիւններու ձեռքէն խլած էին անոնց կալուածները:

Յակասակ Աւագ դատախազի ջանքերուն

Ուստի դիմեցինք. Բայց ի՞նչ տարբերութիւն:

Վճռաբեկ ատեանի աւագ դատախազը ճիշդ այնպէս, ինչպէս կը լուծուէր փորձագետներու տեղեկագրին մէջ, յայտարարեց, թէ պատժելի ոչ մէկ տուեալ կայ եւ պահանջեց իմ անպարտ արձակումս, բայց Վճռաբեկը հակառակ այս յայտարարութեան՝ զիս յանցաւոր հռչակեց:

Ինչքան որ ես վստահ էի իմ գրածեմ, Նոյնպէս Վճռաբեկ ատեանի դատախանձն էր վստահ իր կարգաճանձն ու հասկցածէն, եւ որոշումը բողոքարկեց ու դիմեց Ընդհանուր խորհուրդին:

Բայց, ի՞նչ ըսեմ. այդ մեծ ուժը, որ վճռած էր չափուսահմանս յայտնել ինծի, եւ դատավարութեանս իւրաքանչիւր փուլին ինծի համար անիմաստ միջոցներով զգալի կը դարձներ իր ներկայութիւնը, ահաւասիկ դարձեալ վարագոյրի ետեւն էր: Արդարեւ, Ընդհանուր խորհուրդն ալ քուէներու մեծամասնութեամբ յայտարարեց, թէ անարգած եմ թրքութիւնը:

Աղանիի նման

Բացայայտ է, որ անոնք, որոնք ջանք չեն խնայեր զիս մեկուսացնելու, տկարացնելու եւ անպաշտպան դարձնելու, իրենց տեսանկիւնէն, հասան իրենց նպատակին: Այժմէն իսկ, հանրութեան իրենց ներարկած կեղ-

տոտ եւ սխալ տեղեկութիւններուն ազդեցութեամբ՝ ստեղծած են ոչարհամարիելի թուաբանակով կարեւոր խաւ մը, որ Յրանդ Տիկէնը կը նկատէ «թրքութիւնը անարգող» անձ մը:

Յամակարգիչս ընթացիկ էջերն ու յիշողութիւնը բեռնուած է նման քաղաքացիներու դրկած բարկութեան եւ սպառնալիքի տողերով:

Այդ նամակներէն մէկը, որ թղթատարին յանձնուած էր Պուրասայէն, անմիջական վտանգ ներկայացնելուն՝ մտահոգեց զիս եւ հակառակ անմիջապէս շիջիլի դատախազութեան յանձնելուս, մինչեւ օրս որեւէ արդիւնք չեմ ստացած: Զանի տեղն է՝ ուզեցի կշիռը:

Այս սպառնալիքները որքանով ճշմարիտ են, որքանով չեն: Բնականաբար անկարելի է որ գիտնամ:

Ինծի համար բուն սպառնալիքը եւ անհանդուրժելին՝ հոգեկան այն տանջանքն է, զոր կ'ապրիմ իմ մէջ:

«Այս մարդիկը հիմա ի՞նչ կը մտածեն իմ մասին». հարցում, որ կը կրծէ ուղեղս:

Դժբախտաբար, անցեալի համեմատ աւելի հանրածանօթ դարձած եմ այլեւս կը զգամ, որ մարդիկ ակնարկ մը կը նետեն դէպի ինծի եւ կ'ըսեն. "Ասա՛, տես, ասիկա այդ հայը չէ":

Եւ բնագոյրով կը սկսիմ ինքզինքս տանջելու:

Այս տանջանքին մէկ երեսը հետաքրքրութիւնն է, միւսը՝ խռովքն է:

Մէկ երեսը ուշադրութիւնն է, միւսը՝ երկչոտութիւնը:

Կը նմանիմ ճիշդ աղանիի մը...

Անոր չափ՝ աջ-ձախ, ետեւ-առջեւ աչք նետողի վիճակի մէջ եմ:

Գլուխս անոր գլխուն չափ շարժուն է... Եւ մէկ պահէն միւսը իսկոյն դարձնելու չափ ալ արագ:

Ահա՛, ձեզի գինը

Ի՞նչ կ'ըսէր արտաքին գործոց նախարար Ապտուլլահ Կիլ: Ի՞նչ կ'ըսէր արդարադատութեան նախարար ճեմիլ Զիչեք:

"301-ը այդքան ալ չափազանցելու չէ:

Կա՞յ մէկը, որ դատապարտուած կամ բանտարկուած ըլլայ":

Կարծես՝ գին վճարելու համար անպայման բանտ պետք է մտնել:

Ահա՛ գինը... Ահա՛ գինը...

Ո՛վ նախարարներ, արդեօք գիտե՞ք, թէ ինչպիսի գին է մարդ արարածը աղանիի երկչոտութեան մէջ բանտարկելը: Գիտե՞ք:

Դուք բնաւ չէ՞ք դիտեր աղանիները:

«Մահուկէնաց» ըսածնին

Դիւրին գործընթաց մը չէ, զոր կ'ապրիմ... զոր կ'ապրինք ընտանեօք:

Եղան պահեր, երբ լքօրէն մտածեցի Նոյնիսկ երկիրը լքել:

Յատկապէս, երբ սպառնալիքները սկսան մերձենալ հարազատներուս...

Այդտեղ միշտ անճար էի:

Այս ըլլալու է «մահուկէնաց» ըսուածը: Կրնայի իմ սեփական կամքի դիմադրողն ըլլալ, բայց իրաւունք չունէի որեւէ հարազատիս կեանքը վտանգելու: Կրնայի իմ անձիս հերոսն ըլլալ, բայց ինչ միայն հարազատներս, Նոյնիսկ որեւէ մէկը վտանգելով՝ քաջութիւն ընելու իրաւունք չունէի:

Ահա, ճարահատ նման պահերուն՝ ընտանիքս, զաւակներս հաւաքեցի, անոնց ապաստանեցայ եւ ամենամեծ նեցուկը անոնցմէ ստացայ: Կը վստահէի:

Ո՛ր որ ես էի, անոնք ալ հոն պիտի ըլլային:

«Երթանք» ըսեմ՝ պիտի գային, «մնանք» ըսեմ՝ պիտի մնային:

Մաւ եւ դիմադրել

Լաւ, բայց եթէ երթայինք՝ ո՛ր պիտի երթայինք:

Յայաստա՞ն:

Ինծի նման մէկը, որ չի հանդուրժեր անարդարութիւններու, ինչպէ՞ս պիտի հանդուրժեր այնտեղի անարդարութիւններուն:

Արդեօք հոն աւելի մեծ փորձանքներ պիտի չբարդուէի՞ն գլխուս:

Դէպի եւրոպական երկիրներ երթալը բնաւ չէր հրապուրեր զիս:

Արդարեւ, մէկն եմ, որ երբ երեք

օր Արեւմուտք երթայ, չորրորդ օրը նեղութենէ զալարելով՝ «ա՛լ թող վերջանայ, վերադառնամ» կ'ըսէ եւ իր երկիրը կը կարօտնայ: Ուրեմն ի՞նչ պիտի ընէի այդ կողմերը:

Յանգիստ նստիլը զիս պիտի խանգարէր:

«Եռացող դժոխք»ները լքելով՝ դէպի «պատրաստի դրախտներ» փախչիլը ամէն բանէ առաջ բնաւ յարիր չէր իմ նկարագրիս:

Մենք այն մարդոցմէ էինք, որոնք հետամուտ են իրենց ապրած դժոխքը դրախտի վերածելու:

Թուրքիա մնալն ու ապրիլը՝ թէ մեր իսկական ցանկութիւնն էր, թէ՛ ալ այդպէս կը թելադրէր այն յարգանքը, զոր կը տածէինք Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան պայքար մղող, մեզի թիկունք կանգնող ծանօթ կամ անծանօթ հազարաւոր բարեկամներու նկատմամբ:

Պիտի մնայինք ու պիտի դիմադրէինք:

Սակայն եթէ օր մը ստիպուիք մեկնելու... ճամբայ պիտի ելլենք ճիշդ այնպէս, ինչպէս 1915-ին... Մեր պապերուն նման... Առանց գիտնալու, թէ ո՛ր կ'երթանք... Զալելով՝ անոնց քալած ճամբաներէն... Չգալով չարչարանքը, ապրելով տանջանքը...

Ահա այսպէս դժգոհելով պիտի լքէինք մեր հայրենիքը: Եւ պիտի երթայինք դէպի հոն, ուր ի՞նչ թէ մեր սիրտը, այլ մեր ոտքերը կը տանին... Ո՛ր որ է...

Երկչոտ ու ազատ

Կը յուսամ չհարկադրուիլ ապրելու նման լքում մը: Նման բան չապրելու համար արդէն ունինք լի յոյսեր, լի պատճառներ:

Յիմա այլեւս կը դիմեմ Մարդկային իրաւանց եւրոպական ատեան:

Այս դատը քանի՞ տարի կը տեւէ, չեմ կրնար գիտնալ:

Ինչ որ գիտեմ այն է, որ -եւ ատիկա քիչ մը կը հանգստացնէ զիս,- գոնէ առնուազն մինչեւ այդ դատին աւարտը պիտի շարունակեմ ապրիլ Թուրքիոյ մէջ:

Եթէ ատեանը ի նպաստ ինծի վճիռ մը արձակէ՛ անկասկած շատ պիտի ուրախանամ եւ այդ ալ կը նշանակէ, որ այսուհետեւ երբեք պիտի չստիպուիմ լքելու երկիրս:

Յաւանաբար 2007-ը ինծի համար ա՛լ աւելի դժուար տարի մը պիտի ըլլայ:

Դատերը պիտի շարունակուին, Նորերը պիտի սկսին: Ո՛վ գիտէ դեռ ինչպիսի՞նք անիրաւութիւններու դեմ յանդիման պիտի մնամ:

Բայց մինչ այս բոլորը պատահին՝ հետեւեալ իրողութիւնը պիտի համարիմ իմ միակ երաշխիքը:

Այո՛, թերեւս ես զիս աղանիի խռովքի մը մէջ կը զգամ, բայց գիտեմ, որ այս երկրին մէջ մարդիկ աղանիներուն չեն դաչիր:

Աղանիները քաղաքին մինչեւ խորքը, մարդկային բազմութիւններուն մէջ իսկ կը շարունակեն իրենց կեանքը:

Ճիշդ է՝ քիչ մը երկչոտ, բայց Նոյնքան ալ ազատ: